


1426

1562

Գրիգոր Խաչաթեանց



ԵՂԻՑԻ ԸՂԲԻ ԻՐՆԵՐԻ ԸԹԹԻՒ

Ձեր պատուական “Հանդիսի,, ներկայտա-  
րուայ առաջին համարում սկսուել է տպագրուել  
Պ. Գ. Տէր-Պօղոսեանի ուշագրաւ յօդուածը  
“Եղեշէի Պատմութեան աղբիւրը, վերնագրով,  
որ խոստանում է աւելի հետաքրքրական լինել  
յաջորդ համարներում:

Հարց ծագելով “Վարդանանց Պատմու-  
թեան,, աղբիւրների մասին՝ բնականաբար ա-  
ռաջ է գալիս եւ Ղաղաք Փարավէցին, որ այսպէս  
թէ այնպէս՝ սերտ յարաբերութիւն ունի Եղեշէի  
հետ՝ երկուսն էլ միեւնոյն նշանաւոր պատ-  
մական ժամանակամիջոցը վիպագրելով: —  
Գեռ 11 տարի առաջ Փարավէցու մասին գրածո  
քննական փորձի մէջ՝ առաջին անգամ յօշափե-  
լով նորա աղբիւրների ինդիրը, ենթագրել էի  
թէ պատմագրիս աղբիւրները եղել են ի միջի  
այլոց Խորէնացին եւ Եղեշէին:

Ես չգիտեմ, ինչ վերջնական եղակա-  
ցութեան կը գայ Հանդիսի, վերոյիշեալ յօ-  
դուածագիրը. բայց իմ կողմից անդէպ չեմ հա-  
մարում այժմէն իսկ ուղղել մասամբ ու լրացնել  
իմ նախկին կարծիքն. որոնց վերայ ակնօր-

22231

կում է Պր. Տէր-Պօղոսեան, եւ պարզել՝ կարելուն չափ համառօտ, ներկայ հայեացքս մասնաւորապէս Եղիշէի մասին:

Յայտնի է, որ վերջին 15—20 տարին հին հայ գրականութեան ուսումնասիրութիւնը առանձին ուշադրութեամբ կենդրոնացել է առջի-բներէ հետաքննութեան վերայ. մի ճանապարհ որով միայն կարելի է կը ու ստուգել հաստատուն կերպով մեր մատենագիրների հաւաստիութեան չափը, որպէս եւ նոցաժամանակը. եւ ըստ այնմ ապահով նիւթ պատրաստել լուրջ եւ ծանրակշիռ հետազոտութիւնների համար: Ագաթանգեղոսը, Զենոպը, Խղնիկը, Դաւիթը՝ փաքր առ փոքր առաջ են գալիս իրենց խսկական տիպարով. խսկ խորենացին նորերս մի այնպիսի անակնկալ լուսաբանութիւն է սկսել ստանալ, որ սպառնում է ըստ երեւութիւն՝ տակն ու վրայ անել մինչեւ այժմ անկասկածելի համարուած հայ պատմութեան շատ կարեւոր ինդիբներ ու պարագաներ, թէեւ հանգուցեալ գուտշմիդի եւ մանաւանդ Պրոփ. Կարրիերի այս առթիւ յայտնած որամիտ ենթադրութիւնները դեռ կարօտ են վերջնական փաստերի:

Եթէ հաստատուին այս կարծիքները, որ ըստ իսկ շատ մօտ են հաւանականութեան, այն ժամանակ այլ կերպարանափոխութիւնների թը ու անհրաժեշտ կը լինի լուրունիլ նամեւ, որ ոչ թէ խորենացին էր՝ իբրեւ Ե. դարու երկրորդ կիսու մատենագիր, նոյն դարու վերջերը եւ Զ. դարէ սկիզբը ծաղկած Փարպեցու աղ-

քիւրը, ինչպէս ես էի ենթադրել, — այլ լնդ-հակառակը:

Վերջերս լցոս տեսած կարեւոր մի հին միշտակարան նոր լցոս է սփռում եւ Եղիշէի Պատմութեան մինչեւ այժմ մեղ ծանօթ բնագրի վերայ: Այդ յիշատակարանը՝ Պրոփ. Կոնիքիրին՝ կիսն քաղաքի մատենագարանի հայ գրչագիրներից մէկի կողքին գտած Եղիշէի երկաթագիր մագաղաթեայ երկու թերթերն են, որ հրատարակեց «Հանդէսը», իւր 1893թ. Մայիսի համարում, եւ որ համապատասխանում են «Վարդանանց Պատմութեան» (ըստ այժմեսն բաժանման) Զ. յեղանակի վերջին եւ Է. ի սկզբին: Ինչպէս Անգլիացի հայերէնագէտը ճիշդ նկատել է, այս հատակոտողները, որչափ էլ պակասաւոր են, այնու ամենայնիւ ապացուցանում են, որ Եղիշէի բնագիրը առաջ շատ տարբեր էր այն օրինակից, որ այսօր մեր առաջն են զնում տպագրութիւնները. վերջինիս մէջ նկատուում են յետսամուտ ընդարձակ ընդմիջարկութիւններ (interpolation), որոնք գուցէ աղդած լինին նամեւ յեղանակների նախնական թուի աւելանալուն:

Այս ենթադրութիւնը մեծ հաւանականութիւն է ստանում, եթէ այդ յիշատակարանի վերայ աւելացնելու լինինք նամեւ «Բաղմավիպի», 1851թ. Յուլիս համարում լցոս տեսած՝ խորին հնութիւն կրող ձաշոցի մի շատ հետաքրքրական երկաթագիր մագաղաթեայ պատառիկը: Սա բովանդակում է ներկայ Եղիշէի Պատմ. Ե. յեղա-

նակի սկիզբը (‘ՄԵԾ է սէրն Աստուծոյ . . . սիրով’ Աստուծոյ, — 5 տող) տպագրից բաւական տարբեր ընթերցուածներով եւ որ գլուխորն է ուշադրութեան արժանի այս վերնագրով. ‘Վկայութիւն Սրբոյն Վարդանա եւ Հմայեկա եւ Վահանա եւ Սահակա Հայոց սպարապետաց եւ ամենայն սուրբ արանց որբ մեռանի Քրիստոս: — “Վարդանանց Պատամութեան”, մեղ ծանօթ օրինակներում պահասում է այս վերնագիրը, որից կարելի էր հետեւցնել, թէ Եղիշէի հնագոյն բնագիրը աւանդում էր նաև Հայելք (Մամիկոնեան, Երեք տող է նուիրում սորան տպ. օրինակը) եւ մանաւանդ Վահան (Մամիկոնեան եւ ոչ շրջբունի, ինչպէս ենթադրում է ‘Բազմավիպի. Յօդուածագիրը’) ու Սահակ (Բազմատունի) սպարապետների վկայութեան մասին, որոնց անոնն անգամ չենք գտնում տպագիր օրինակներում եւ որ ունի սակայն Փարագեցին:

Գուցէ այս իսկնախնական բնագիրը լինի, որից օգտուել է Փարապեցին եւ որը Անբէոսին (Է. դար) էլ ծանօթ էր. յետոյ նա ենթարկուել է փոփոխութիւնների ու նորից մշակուել՝ ըստ երեւութին, ոչ վաղ քան Է. դարը:

Անհիմն չէ եւ այս ժամանակամիջոցի ուրոշումը. ներկայ Եղիշէի Պատմութեան մէջ արդարեւ նկատուում են Է. դարու գրուածքի հետքեր: Սակայն առանց մանելու Եղիշէան աղբիւրների հարցի մանրամասնութիւնների մէջ՝ ես կը նշանակեմ համառօտակի դոցանից մի քանիսը. բանասէրների համար՝ կարծում եմ, աւելորդ չե

լինիլ իմ փորձու, որ կարող է ծրագրի տեղ էլ ծառայել նոյն ինդրի մանրամասն մշակման համար եւ բարուգուել ու լրացուել ապագայ հետազօտութիւններով:

Եղիշէի աղբիւրները, ինչպէս, դիտել է եւ Պր. Գ. Պողոսեան, գեռ ուսումնասիրուած չեն: Դոցանից յիշելու է.

Կախ Առողջապահութեանը, որ հասարակ աղբիւր է բոլոր մեր մատենագիրների համար, եւ մասնաւորապէս Ա. Է. Բ. Ուսկաբայեցոց Քրիւրը. այստեղից Եղիշէն փոխ է առել կրօնական պատերազմի ընդհանուր գաղափարը՝ յարմարցնելով իւր գրուածքին Հրեշից գլքերի մի քանի պատմական պարագաները ու գործող անձնինքների նկարագիրները:

Երկրորդ՝ Եղիշէի Մաղդեղանց դենին վերաբերեալ մասում:

Երրորդ՝ Առողջ ճիշ Հիայութանութիւններ, որոնց մէջ առանձինն՝ Ա. Շահ-անի Հիայութան հայերէն նարքանութիւնը. (‘Սոփերը’, Ի. Համեմ. Նախ Հoffmannի Auszüge aus Syrischen Acten persisch. Märtyrer եւ այլոց):

Սոցանից օգտուել է Եղիշէն՝ փոխ առնելով հատուածներ՝ նկարագրական նիւթերը ու յարմարցնելով նոցա իւր Պատմութեան:

Կան եւ այնպիսի աղբիւրներ. որոնցից քաղել է Եղիշէն ոճեր, գարձուածներ՝ այսպէս ասած՝ ոճաբանական նիւթեր: Վերջին տեսակի աղբիւրներից կարեւոր է յիշել Փէլանի հայ նարքանութիւնը: 1822 եւ 1826թուին Ս. Ղա-

զար հրատարակուած այս հեղինակի “Մնացոլ դք ի Հայս”, երկու գրքերում նշանակել էր նոցա լսամին. թարգմանիչ Հ. Աւգերեան՝ ի միջի այլ հայ մատենագիրների, եւ Եղիչէ (‘Վարդան Պատմ.’) եւ միւս երկաս.) նոյն գրուածքից արած մի քանի ակներեւ փոխառութիւնները դոցա թիւը կարելի էր կրկնապատճել՝ աւելացը նելով նաև 1892թ. լյս տեսած նյոն Հերբայեցի փիլիսոփայի ‘Ճառերի’, մէջ պատահածները, — որով անհերթելի կերպով ապացուցվում է՝ Վարդանանց Պատմութեան, հեղինակի կախումը Փիլոնի հայ թարգմանութիւնից: — Վերջինս վենետիկի Գեր. ՀՀ. Միիթարեանք եւ դարու գործ են համարում եւ յատկապէս ‘երիցագոյն թարգմանչաց երկասիրութիւն.’’ (Ա. Բարեկամ. Հայութ.): Բայց մի քանի պատճառներով ես հակամէտ եմ կարծելու, որ հազիւ թէ ի. դարուց շատ վաղ կատարուած լինէր այդ թարգմանութիւնը: Եթէ ընդունուի այս կարծիքը, հետեւաբար Եղիշէի այժմեան բնագրի խմբագրութիւնն էլ դնելու է ոչ վաղ քան ի. դարում:

Արդարեւ, ‘Վարդանանց Պատմութեան’, գրութեան ժամանակը երկու դար վար իջեցը նելուն նպաստող ակնարկածս փաստը ինքը դեռ կարօտ է ապացուցի, աւանդաբար Ե. դարու գործ համարուած Փիլոնի հայ թարգմանութիւնը է. դար տեղափոխելը մի ենթագրութիւն է բաւականին հաւանական, որ պէտք է սակայն ստուգուի հիմնաւոր քննութեամբ: Բայց այստեղ

ես մտադիր էլ չեմ ենթադրութիւնից շատ աւելի ասել. „I only say suppose this supposition,” ինչպէս ասումէ Հանճարեղ Անդլիացի բանաստեղծը: — Մի գիտողութիւն միայն առ այժմ՝ իրբեւ սկզբունքի հարց՝ աւելորդ չեմ համարում անել այս առթիւ մեր հին գրականութեան մի բնորոշ գծի մասին որ գուցէ կարող էր կոռուան լինել ներկայ խնդրի լուծմանը: Արդեօք մեր մի քանի մատենագիրների երկերի ու հին թարգմանութիւնների մէջ նկատած իորին հելլենաբանութիւնը չէր կարող ապացուցի տեղ ծառայել նոցա երեւան գալու ժամանակը համար. (Հարկաւ՝ նոցա, որոնց ժամանակը հաստատ յայտնի չէ): Կամենում եմ ասել, թէ մեր Ոսկե ղենիկ կամ Ե. դարու գրականութեան յատկանի շէ կարող համարուիլ հելլենաբանութիւնը: — Արդէն Խորին հելլենաբանութեամ՝ (Բարեկամ. Հայութ.) գրուած ‘Պիտոյից գրքի, հեղինակն, ինչպէս տեսանք, Ե. ից Ը. դար են իջեցնում այժմ: Հելլենաբանութեան նոյն իսկ ամենափայլուն ներկայացուցիչ եւ Ե. դարու մատենագիր համարուած Դարեկին Անյանի գրուածքների մի մասը վերցիշեալ Անդլիացի գիտնականը հակամէտ է ի. դարուն յատկացնել. (Conybeare Anecd. Ofon. etc. 1892. նախաբան § 30, եւս եւ ‘Հանդէս’, 1893թ.): — Դորան կը կցեմ եւ իմ ենթադրութիւնս վերաբերութեամբ տակաւին չորոշուած Դաւթի անձնաւորութեան, որ՝ ոչ առանց հաւանականութեան, կարող էր

ԱԵՐԵՇՈՒԽ ԺԻՇԱԾ Է. Դարու ՀԱՄԱՆՈՒՆ ՀԱՅ  
 “ՓԻԼԻՍՈՒԽԱՆ”, ԷԼ ԼԻՆԵԼ: — ԿՍՆ ՃԱԿԱՄՈՎ-  
 ԳԻՐԸ, Այսինքն՝ Ե. Ից Է. Դար ՄԵՂԱԳԻՇՈՒԵԼԸ,  
 — ԻՆՉՊէս ԵՐԵՎՈՒՄ Է, ՎԻՃԱԿՈՒԱԾ Է Եւ մեղ  
 ՀԵՄԱՔՐՔԲՈՂ ՓԻԼԱԿ “բոլորովին ՀԵԼԵՆԱԲԱՆ-  
 (Բ-Ի-Ց. Հ-Ա-Կ.) ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ:

Տ/16 Փետրուարի 1895 թ. Մուկուս:

ԳՐ. ԽԱՎԱԹԵԱՆ:



ԱՆ Հայագիտական գրադարան



MAL046502

